ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1965 Общественные науки

Դ. Հ. Վարդգեսյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1921—1923 ԹԹ.

Անդրկովկասի ժողովուրդների հերոսական պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Անդրֆեդերացիայի կազմակերպման և ժողովրդական տնտեսության վերականգնման առաջին տարիներին ձեռնարկած սոցիալիստական վերափոխությունների ժամանակաշրջանը։

Անցած ավելի քան 40 տարիների ընթացքում և կոմունիստական շինարարության այժմյան ժամանակաշրջանում ավելի մեծ, խորն ու բովանդակալից նշանակություն են ստացել ժողովուրդների եղբայրությունն ու համագործակցությունը։ Այդ պատճառով էլ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության պատմության լուսաբանումն ունի կարևոր գիտական ու դաստիարակչական նշանակություն։ Դա բացատրվում է ոչ միայն այն բանով, որ Անդրֆեդերացիան մեծ խթան հանդիսացավ երկրամասի տնտեսական ու կուլտուրական շինարարության վերածննդի գործում, այլև նրանով, որ նրա միջոցով մեծ բեկում կատարվեց Անդրկովկասի ժողովուրդների հոգեբանության մեջ, հաղթահարվեց ազգայնականությունը, ժողովուրդների համագործակցությունն ստացավ նոր իմաստ։

Սովետական իշխանության հաստատմամբ նոր դարաշրջան բացվեց մեր հայրենիքի, այդ թվում նաև Անդրկովկասի ժողովուրդների փոխըմբռնման ու եղբայրական համագործակցության դարավոր բարեկամության պատմության մեջ։ Արմատապես փոխվեց երկրամասի ժողովուրդների ազգային փոխհարաբերությունների գոյավիճակը, հիմք դրվեց ազգերի ինտերնացիոնալ համախմբվածությանը։ Լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ հանդես եկած ժողովուրդների մեծ բարեկամությունն ու եղբայրությունը փոխարինեցին նրանց երբեմնի անջատվածությանն ու թշնամությանը։

Լենինն անդրկովկասյան հանրապետությունների սոցիալիստական շինարարության և երկրամասի տնտեսական ուժերի միավորման համար բացառիկ կարևոր նշանակություն էր տալիս ժողովուրդների միջև խաղաղության ստեղծման գործին։ «Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական հանրապետությունները ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[1]։

Չնայած ձեռնարկված նախնական միջոցառումներին, այնուամենայնիվ, Անդրկովկասի ժողովուրդները ապրած լինելով բուրժուական նացիոնալիզմի ռեժիմների շրջանում, դեռևս խիստ կարիք էին զգում փոխադարձ անվստահության և թշնամանքի վերացման։ Կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ երկրամասի կոմունիստական կազմակերպություններն այդ հարցերը լուծեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից։ Անդրկովկասյան

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

ժողովուրդների միջև նորմալ բարեկամական և տնտեսական փոխըմբռնման քաղաքականություն կենսագործելու ճանապարհին չափազանց կարևոր նշանակություն ունեցան երկրամասում քսանական թվականների սկզբին ձեռնարկված այն խելացի և օգտակար միջոցառումները, որոնց շնորհիվ լիկվիդացվեցին սոցիալ-տնտեսական ու քաղաքական անվստահություն ծնող բոլոր պատճառները։

Այսպես, մինչ այդ քաղաքական իրավունքներից զուրկ մի շարք ժողովուրդներին (աբխազներին, աջարներին, օսեթներին և այլն) տրվեց անկախություն, երկրամասի մասշտաբով ձեռնարկվեցին կուլտուր-լուսավորական միջոցառումներ (դպրոցների, ակումբների, գրադարանների, կարմիր անկյունների ցանցի ընդլայնում, քաղաքի կողմից գյուղի կուլտուրական շեֆության կազմակերպում, ադրբեջանական նոր այբուբենին անցնելը և այլն)։ Կարգավորվեցին Անդրկովկասի հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանային, արոտավայրերի, ջրերի, անտառների օգտագործման վեճերը։ Այսպես լուծվեցին Հայաստանի Դիլիջանի, Լոռի-Փամբակի գավառների և Ադրբեջանի Ղազախ գավառի գյուղացիների միջև արոտավայրերի շուրջը եղած դարավոր վեճերը։ Սահմանազծվեցին և հողաբաժիններից զատվեցին անտառային տնտեսությունները, բացատները, համայնական և ընդհանուր արոտավայրերը։ Զգալի աշխատանքներ ձեռնարկվեցին առևտրի, տրանսպորտի, հողաշինարարության կարգավորման ուղղությամբ։ Պարսկաստանից և Ադրբեջանից Հայաստան վերադարձան դաշնակցական կառավարության քաղաքականության հետևանքով Հայաստանից հեռացած տասնյակ հազարավոր հայեր և ադրբեջանցիներ։ Հիմնադրվեցին և ստեղծվեցին հայկական և ադրբեջանական, հայկական և վրացական խառը գյուղեր ու բնակավայրեր։

Անդրկովկասյան հանրապետություններում ազգային հարցի հետագա կարգավորման գործին մեծ խթան հանդիսացան ՌԿ(բ)Պ 12-րդ համագումարի և կուսակցության Կենտկոմի որոշումները, Լենինի ցուցումները։

Անժխտելի փաստ է, որ սովետական կարգերի հաստատումը, ՌՍՖՍՌ-ի տնտեսական և բարոյական օգնությունը վճռական նշանակություն ունեցան երկրամասի տնտեսության վերականգնման, էկոնոմիկայի զարգացման և սոցիալիստական շինարարության ծավալման գործում։ Սակայն, միաժամանակ չի կարելի ժխտել, որ միայն դրսի օգնությամբ, առանց անդրկովկասյան ժողովուրդների ուժերի ու նյութական միջոցների միավորման, հնարավոր չէր երկրամասը դուրս բերել գոյություն ունեցող տնտեսական փակուղուց և անցնել սոցիալիզմին։ Չնայած անդրկովկասյան հանրապետությունները թույլ էին արտադրական ուժերի զարգացման մակարդակով, նյութական միջոցներով, սակայն գոյություն ունեցող նյութական ու մտավոր կարողությունները և հնարավորությունները միավորելու դեպքում կարելի էր հաղթահարել թե՛ տնտեսական փլուզումը, և թե՛ ամրապնդել քաղաքական իշխանության տնտեսական հիմքերը։

Կոմունիստական կազմակերպությունները լայն կամպանիա սկսեցին անդրկովկասյան ժողովուրդներին միավորող օրգանի՝ Անդրկովկասյան միության ստեղծման օգտին։

Երկրամասի միասնական տնտեսական օրգանի ստեղծմանն առանձնապես մեծ խթան հանդիսացան Վ. Ի. Լենինի հայտնի ցուցումները։ Վ. Ի. Լենինը Ս. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում գրում էր.

«Ստացա Ձեր շիֆրովկան՝ հեռագիրը, Անդրկովկասի անհուսալի դրության մասին։ Մենք ձեռնարկել ենք մի շարք միջոցներ. Հայաստանին տվեցինք մի քիչ ոսկի, պարենային կոմիտեին տրվել է ամեն տեսակի հանձնարարություն։ Բայց պետք է նախազգուշացնեմ, որ մենք այստեղ ևս ուժեղ կարիք ենք զգում և օգնել չենք կարող։

Հարկադրաբար պահանջում եմ ստեղծել մարզային տնտեսական օրգան ամբողջ Անդրկովկասի համար»[2]։

Պաշտպանելով Լենինի տեսակետները՝ անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական ջանքերի միավորման անհրաժեշտության հարցում, Ս. Օրջոնիկիձեն նշել է. «Ոչ մելիորացիայի, ոչ էլեկտրիֆիկացիայի բնագավառում և ընդհանրապես տնտեսական կյանքի և ոչ մի բնագավառում լուրջ. պրակտիկ քայլ չի կարելի անել առանց Կովկասի բոլոր ռեսպուբլիկաների ջանքերի միավորման»[3]։

Անդրկովկասի տնտեսական միավորման հարցը Լենինը հետագայում ավելի սրությամբ դրեց, երբ Վրաստանում ևս հաստատվեցին սովետական կարգեր։ Վ. Ի. Լենինը 1921 թ. ապրիլի 11-ին Արհմիությունների համառուսաստանյան կենտրոնական խորհրդի կոմունիստական ֆրակցիայի նիստում արտասանած եզրափակիչ ճառում նշում էր.

«Այժմ սովետական է դարձել Վրաստանը, խոսքը գնում է կովկասյան ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի մի տնտեսական կենտրոնի մեջ տեղավորելու մասին։ Նավթն արդյունահանում է Ադրբեջանը, իսկ այն պետք է փոխադրել Վրաստանի տերիտորիայով, Բաթումի միջոցով. այնպես որ միջտնտեսական կենտրոնի ստեղծումը դառնում է անհրաժեշտ»[4]։

Ղեկավարվելով Լենինի ցուցումներով, ՌԿ(բ)Պ կովկասյան բյուրոն, 1921 թ գարնանից, ձեռնամուխ եղավ երկրամասի տնտեսական միավորմանը։ Այդ նպատակով սկսվեց միավորման համաժողովրդական կամպանիա։ Երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները ամենուրեք՝ համագումարներում, կոնֆերանսներում, միտինգներում քննարկեցին այդ հարցը և ջերմորեն հավանություն տվեցին ՌԿ(բ)Պ կովկասյան բյուրոյի այդ նախաձեռնությանը։ Նոր Բայազետի գավառային կուսակցական կոնֆերանսը ՌԿ(բ)Պ կովկասյան բյուրոյին ուղարկած իր ողջույնի հեռագրում գրել է. «Կոնֆերանսը գտնում է, որ միայն աշխատավորության տնտեսական ու քաղաքական սերտ կապը կարող է տարիների կռիվներից հոգնած ու հյուծված Անդրկովկասի բանվորությանը և գյուղացիությանը տանել դեպի շինարարական աշխատանք և նրանցից ստեղծել մի ուժեղ պատնեշ ընդդեմ եվրոպական կապիտալիզմի՝ Մերձավոր Արևելքում»[5]։ Սակայն անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական կազմակերպությունների շարքերում հանդես եկան առանձին մարդիկ, որոնք ոչ մի կերպ չէին համաձայնվում երկրամասի հանրապետությունների միջև միասնական տնտեսական կապերի ստեղծմանը։

Վրացական նացիոնալ-ուկլոնիստ Բ. Մդիվանին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ համագումարում (1923 թ. մարտի 19-ին) ունեցած իր ելույթում տնտեսական միավորման հարցի մասին

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 387, 1954։

3 Ս. Օրջոնիկիձե, Ընտիր ճառեր և հոդվածներ, Հայպետհրատ, 1950, էջ 62։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 382։

5 «Խորհրդային Հայաստան», № 20, 26 հունվարի, 1922։

խոսելիս արտահայտեց այն միտքը, թե ոչ մի անհրաժեշտություն չկա միավորելու Անդրկովկասի սովետական հանրապետությունները տնտեսական տեսակետից, որովհետև երկրամասի տնտեսական կառուցվածքը նույնն է, իսկ եթե տնտեսության հիմնական ճյուղերը նման են, ապա ինչու այդ դեպքում կատարել միավորում, կապել նրանց իրար հետ, այլ չթողնել, որ նրանք որպես առանձին միավորներ ուղղակիորեն կապ հաստատեն Սովետական Ռուսաստանի հետ[6]։ Այդ առարկությունն անհիմն էր և անընդունելի։ Ճիշտ է, անդրկովկասյան հանրապետությունները իրենցից ներկայացնում էին առանձին միավորներ, Ադրբեջանը կապված չէր Հայաստանի հետ, իսկ Հայաստանը Վրաստանի հետ, բայց երբ վերցնում ենք հարցի տնտեսական կողմը, ապա միանգամայն պարզ է դառնում, որ անդրկովկասյան հանրապետությունների միջև կար սերտ կապ։ Նրանց տնտեսական սերտ փոխհարաբերությունների ապացույց են՝ միասնական երկաթուղին, Բաքու — Բաթում նավթամուղը, Բաթումի նավահանգիստը, Հայաստանով Պարսկաստան գնացող առևտրական ճանապարհները, ընդհանուր արոտավայրերը, ջրերը, անտառները և այլն։ Հայաստանը և Ադրբեջանը միշտ զգացել և զգում էին Վրաստանի նավահանգիստների կարիքը, իսկ Ադրբեջանը Հայաստանի արոտավայրերի, ջրերի և անտառների կարիքը։ Վերցնենք թեկուզ անասնապահությունը։ Ադրբեջանը չէր կարող անասնապահություն ունենալ և զարգացնել, եթե չլիներ Հայաստանի արոտավայրերը, և ընդհակառակը, Հայաստանն ու Վրաստանը իրենց ներքին չէին կարող առաջ մղել և զարգացնել իրենց էկոնոմիկան, առանց Ադրբեջանի նավթի։

Ս. Օրջոնիկիձեն 1921 թ. նոյեմբերի 22-ին Թբիլիսիի համաքաղաքային կուսակցական ժողովում խոսելով Ադրբեջանի համար Հայաստանի արոտավայրերի նշանակության մասին, ասել է. «Երբ Ադրբեջանում հաստատվեց սովետական իշխանություն, առաջին հարցը, որ ծառացավ մեր առաջ, դա արոտավայրերի հարցն էր։ Այն արյունոտ կոտորածը, որ տեղի էր ունենում մի կողմից ղարաբաղցիների և զանգեզուրցիների և մյուս կողմից ադրբեջանցիների միջև, հազիվ թե այնպիսի սարսափելի բնույթ կրեր, եթե չլիներ այդ հարցը։ Ադրբեջանի գյուղացիության համար այս հարցը մահու և կենաց հարց է։ Ադրբեջանի գյուղացիությունն առանց այդ արոտավայրերի գոյություն ունենալ չի կարող»։

Ինչպես ժողովրդական տնտեսության մեջ տնտեսական նշանակություն ունեցող բոլոր հարցերը, այնպես էլ արոտավայրերի հարցը, հատուկ քննարկման առարկա դարձավ 1921 թ. օգոստոսի 7—12-ը տեղի ունեցած երկրային տնտեսական խորհրդակցությունում, որը նշեց Անդրկովկասի տնտեսական կյանքի այդ հիվանդագին հարցերի բարելավման ուղիները։ Այդ հարցերը կարգավորելու նպատակով երկրամասի հանրապետությունների ներկայացուցիչներից ստեղծվեց երկրամասի արոտավայրերի կարգավորման հանձնաժողով[7], որը ճշտեց երեք հանրապետությունների հողերի, արոտավայրերի, ջրերի և անտառների սահմանները։ Որպեսզի լիովին միացվեին հանրապետությունների տնտեսական ջանքերը, երկաթուղու պրոլետարիատը, ելնելով դրա անհրաժեշտությունից, առաջ քաշեց երկրամասի մասշտաբով

---

6 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մլի վրացական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 13, գործ 182, թ. 340։

7 Նույն տեղում, գ. 1, թ. 67։

դաշնակցային մշտական գործող օրգաններ ստեղծելու հարցը, որոնք պետք է մեկ ընդհանուր հունի մեջ առնեին հանրապետությունների տնտեսական կյանքը։ Այդպիսի միջանկյալ կենտրոն դարձավ Անդրկովկասի երկաթուղային միացյալ վարչությունը, որը հիմնադրվեց 1921 թ. ապրիլի 16-ին՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրով։ Որոշ ժամանակ անց ստեղծվեց արտաքին առևտրի միությունը։ Սակայն, ինչպես ցույց տվեց կյանքը, միայն վերոհիշյալ տնտեսական օրգանների միավորումը չէր հանգեցնում ցանկալի արդյունքի, առանց քաղաքական միավորման[8]։

Անդրկովկասի երկաթուղային վարչությունը, կամ արտաքին առևտրի միությունը չէին կարողանում իրենց այս կամ այն որոշումը կենսագործել երկրամասի մասշտաբով։ Նույնիսկ գործը հասավ այնտեղ, որ լրիվ չկատարվեց ՌԿ(բ)Պ-ի կովկասյան բյուրոյի որոշումը Անդրկովկասի «Արտաքին առևտրի միությանը» (Обвнешторг) վայրուտային ապրանքներ հանձնելու վերաբերյալ[9]։

Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական բոլոր օղակները միացնելու և մեկ տնտեսական կենտրոն ստեղծելու գործում կարևոր դեր խաղաց նաև 1921 թ. օգոստոսի 30-ին կայացած անդրկովկասյան երկաթուղայինների երկրամասային համագումարը։ Այդ համագումարի որոշման համաձայն ստեղծվում են անդրերկաթուղային միացյալ պրոֆմիություն, Սև ու Կասպից ծովերի առևտրական նավատորմի և Անդրկովկասի երկաթուղային տրանսպորտի միջոցով կատարվելիք ապրանքափոխադրումների միացյալ բյուրո։ Երկաթուղայինների միավորումով սկսվեց Անդրկովկասի տնտեսական միավորման և նրա հետագա զարգացման պրոցեսը։ Երկրամասի հանրապետությունների տնտեսական կապերի ուղղությամբ երկրորդ կարևոր ձեռնարկումը հանդիսացավ 1921 թ. հունիսի 2-ին երեք հանրապետությունների արտաքին առևտրի միացումը։ Տնտեսական միահյուսման գործում երրորդ կարևոր միջոցառումը այն դեկրետներն էին, որոնցով վերացվեցին անդրկովկասյան հանրապետությունների, ինչպես նաև այդ հանրապետությունների և Սովետական Ռուսաստանի միջև արհեստականորեն ստեղծված տնտեսական պատնեշները՝ մաքսատները, պարենային խմբերը[10]։

ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահությունը 1922 թ. օգոստոսի 23-ի նիստում լսելով երկրի ներսում և հարևան հանրապետությունների միջև եղած սահմանների հարցը, որոշեց վերացնել բոլոր մաքսային պատնեշները և առաջարկեց օրենսդրական հանձնաժողովում 48 ժամվա ընթացքում վերանայել բոլոր այն դեկրետները, որոնք սահմանում էին մենաշնորհ և արգելում ապրանքների արտահանումը։ Որոշվեց թույլատրել ապրանքների ազատ արտահանում[11]։ Անդրկովկասի տնտեսական կյանքում վերոհիշյալ երեք կարևոր միջոցառումները աշխուժություն և ներդաշնակություն առաջացրին երկրամասի սովետական հանրապետությունների տնտեսության մեջ, որի շնորհիվ ընդլայնվեցին ազգամիջյան տնտեսական կյանքի կապերը և ավելի էֆեկտիվ դարձավ երեք հանրապետությունների տնտեսական գործունեու-

---

8 Նույն տեղում, թ. 65։

9 Նույն տեղում, թ. 67։

10 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆոնդ 612, գործ 9, թերթ 69։

11 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆոնդ 1, գործ 310, թերթ 104։

թյունը։ Սակայն երկրամասի հանրապետությունների առանձին առևտրական կազմակերպություններ գերագնահատելով իրենց տեղական նեղ և ժամանակավոր բնույթ կրող շահերը, ընդառաջ չէին գնում Անդրկովկասի «Արտաքին առևտրի միությանը»։ Նրանք մտածում ու գործում էին «որքան կարելի է պոկել շատ, բայց տալ քիչ» սկզբունքով։ Նման գործունեության հետևանքով «Արտաքին առևտրի միությունն» իր միջոցները շռայլում, վատնում, կամ ներդնում էր ոչ թե երկրամասի տնտեսական շինարարության, այլ չնախատեսված և ոչ կարևոր գործերում։

Քայքայված տնտեսության վերականգնումը, պարենային սովի հաղթահարումը և արտաքին առևտրի գործում եղած թերությունները վերացնելու խնդիրները պահանջում էին ձեռնարկել անհետաձգելի միջոցներ։ Այդ նպատակով Անդրկովկասի սովետական հանրապետությունները հիմնեցին արտաքին առևտրի միավորման մի նոր մարմին, որը կոչվեց «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միություն՝ արտաքին առևտրի համար»[12]։

Այդ միության բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու համար պայմանավորվող հանրապետությունների հատուկ որոշումով ստեղծվեց միասնական վարչություն, որը վերջ տվեց Անդրկովկասյան հանրապետությունների արտաքին առևտրի օրգանների միջև նկատվող մրցակցությանը, կարգավորեց նրանց փոխհարաբերություններն արտաքին առևտրի, երկրի ներսում մթերքների բաշխման և այլ հարցերում։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ոչ միայն ընդունեցին Անդրկովկասի անկախ սովետական հանրապետությունների գոյությունը, այլև ձեռնամուխ եղան այն պրակտիկ միջոցառումների իրականացմանը, որոնք նպաստեցին ՌՍՖՍՌ-ի և Անդրկովկասի սովետական հանրապետությունների տնտեսական համագործակցության և փոխադարձ օգնության կապերի ամրապնդմանը։ Այսպես, Անդրկովկասի «Արտաքին առևտրի միությունը» ՌՍՖՍՌ-ի կառավարության հետ տնտեսական առանձին հարցերի կապակցությամբ կնքեց համաձայնություն[13], որը կենսական կարևոր նշանակություն ունեցավ Անդրկովկասի և ՌՍՖՍՌ-ի համար։ Ըստ այդ համաձայնության, վերացվեցին այն արգելքները, որոնք խոչընդոտ էին հանդիսանում թե՛ ՌՍՖՍՌ-ի և թե՛ Անդրկովկասի քաղաքացիների համար՝ աղատորեն տեղափոխություններ կատարելու երկու երկրների սահմաններում։ Ռուսաստանի արտաքին առևտրի կոմիսարիատը հրաժարվեց հումքի գնումներ կատարել Անդրկովկասում, հաշվի առնելով, որ այդ աշխատանքը պետք է կատարեն անդրկովկասյան հանրապետության արտաքին կոմիսարիատի գործակալները։

Բացի այդ, ՌՍՖՍՌ-ն հրաժարվեց նաև առևտրական գործարքներ կատարել Թավրիզում, այդ շրջանը ամբողջովին թողնելով անդրկովկասյան արտաքին առևտրի կոմիսարիատի հայեցողությանը։ Վերացվեցին նաև ուկրաինական արտաքին առևտրի բաժանմունքները Թիֆլիսում և Բաթումում։ Այս բոլորը լայն հնարավորություններ ստեղծեցին երկրամասի հանրապետությունների ներքին և արտաքին առևտրի բարելավման համար։

Երկրամասի կոմունիստական կազմակերպությունները նացիոնալ-ուկլոնիստների տեսակետին հակադրեցին միասնություն ստեղծելու և միասին ընթանալու անհրաժեշտությունը։ Նրանք ելնում էին այն բանից, որ երկրամասի

12 Վրացական ՍՍՌ ԿՊԱ, ֆոնդ 612, գործ 9, թ. 656։
13 Նույն տեղում։

համագործակցությունն ու փոխօգնությունը գգալիորեն կարագացնեն սոցիալիստական շինարարության տեմպերը։ Եվ իրոք, սոցիալիզմի զարգացման օբյեկտիվ օրենքները անխուսափելիորեն ճանապարհ հարթեցին իրենց համար՝ հակառակ նացիոնալ-ուկլոնիստների ջանքերի։

Անդրկովկասի կոմունիստները սկսեցին լարված աշխատանք ծավալել ներքին առևտրի վերաբերյալ լենինյան ցուցմունքները իրականացնելու ուղղությամբ։ Հանրապետությունների պարենժողկոմատները ձեռնամուխ եղան իրենց առևտրական ապարատի կազմակերպմանը, իսկ կոոպերացիան՝ իր նոր ցանցի ստեղծմանը։ Մասնավոր առևտրի դեմ սկզբում դուրս եկավ պետական մանրածախ առևտուրը, որի նպատակն էր ապրանքներն անմիջապես հասցնել սպառողին։ Մանրածախ առևտրին կազմակերպված բնույթ տալու անհրաժեշտությունը հարկադրեց ստեղծել առևտրական-համաապրանքային օբյեկտներ։ 1921 թ. կազմակերպվում են պետական համաապրանքային խանութներ։ 1922 թ. այդպիսի խանութներ կազմակերպվեցին Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Քութաիսում, Բաթումում, Կիրովաբադում[14]։ 1922 թ. սկզբներին սկսվում է ծավալվել առևտուրը, իսկ սեպտեմբերին հիմնվում են պետական կենտրոնական առևտրական մարմիններ։ Հայաստանում՝ Հայպետառ, Վրաստանում՝ Ցեկավշիրին, Ադրբեջանում՝ Ազերիթթիֆակը։ 1922 թ. հուլիսի 14-ից իրենց առևտրական գործունեությունը սկսեցին համառուսական տեքստիլ սինդիկատի Թիֆլիսի, Բաքվի, Երևանի գործակալությունները, ինչպես նաև «Արդառը», Պետրանկը և այլն։

Անդրկովկասի և Ռուսաստանի միջև առևտրական շրջանառության վերականգնման գործում շահագրգռված էին Անդրկովկասի երեք հանրապետությունների աշխատավորները։ Նկատի ունենալով սովետական հանրապետությունները մեկ տնտեսական ճակատի վերածելու և տնտեսական վերականգնումն ամուր հիմքերի վրա դնելու հանգամանքը, Անդրբերկոմը որոշեց հիմնել Ռուս-կովկասյան խառն ակցիոներական ընկերություն[15], որը պետք է վերականգներ առևտրական շրջանառությունը Ռուսաստանի և Անդրկովկասի միջև[16]։

Այսպիսով, հին տեղական և ազգային կղզիացածության և սեփական արտադրության արդյունքների հաշվին գոյությունը պահպանելու սկզբունքին փոխարինեցին ազգերի փոխադարձ համակողմանի կապն ու համագործակցությունը և տնտեսական փոխադարձ կախվածությունը։

Տնտեսության զարգացման ուղղությամբ ձեռնարկած նախնական միջոցառումները՝ երկաթգծի միավորումը, ընդհանուր արտաքին առևտրի միության կազմակերպումը, ֆինանսների կարգավորումը և այլն տվեցին որոշ դրական արդյունքներ և նպաստեցին երկրամասի արտադրողական ուժերի զարգացմանը։ Թվում էր, թե այդ բոլորից հետո արդեն ստեղծված են բոլոր նախադրյալները, երկրամասային միացյալ տնտեսական օրգանները ապահովված են ամեն տեսակի աջակցությամբ՝ այդ միության կազմի մեջ մտնող սովետական հանրապետությունների կառավարությունների կողմից։

Սակայն իրականում գործն այսպես չընթացավ։ Դա հատկապես նկատելի դարձավ «Արտաքին առևտրի միության» գործունեությունից։ Այդ միության պրակտիկ գործունեությունը ցույց տվեց, որ տնտեսական ճակատում ձեռք

14 «Զարյա Վոստոկա», № 825, 12 մարտի, 1925։
15 ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 13, գ. 98, թ. 24։
16 Վրացական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 612, օպ. 1, գ. 92, թ. 3։

բերած հաջողությունները դեռևս շատ քիչ են ու չեն համապատասխանում տվյալ ժամանակի զարգացման պահանջներին և, ըստ ամենայնի, չեն նպաստում երկրամասի տնտեսության անշեղ վերելքին։ Ստեղծված պայմանները անհրաժեշտաբար պահանջում էին աշխատանքային նոր եռանդ, բարձր կազմակերպվածություն և տնտեսական էլ ավելի սերտ համագործակցություն։ Անդրադառնալով այդ հարցին, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարն իր ընդունած որոշման մեջ նշեց, որ չնայած տնտեսական բնագավառում ձեռք բերած հաջողություններին, այնուամենայնիվ, ՌԿ(բ)Պ կովկասյան բյուրոյի կողմից այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները եղել են անբավարար, որը մասնավորապես, նկատելիորեն արտահայտվեց տրանսպորտի և արտաքին առևտրի բնագավառում[17]։

Այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր տնտեսական ավելի սերտ միավորում, քաղաքական և տնտեսական մեկ, ընդհանուր ղեկավարություն։ Անդրկովկասի հանրապետությունների միավորման ձգտումը տնտեսական ասպարեզում տարվում էր առանձին ճյուղերի զարգացմանը զուգընթաց։ Այդ քաղաքական ու տնտեսական միավորումը, այսինքն՝ Անդրֆեդերացիայի ստեղծումը տեղի ունեցավ 1922 թ. մարտի 12-ին։ Այդ օրգանն հետագայում իր քաղաքական ու կազմակերպական միջոցառումների շնորհիվ լայն հնարավորություններ ստեղծեց ծավալելու սոցիալիստական վերափոխումներ ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուրական շինարարության ուղղությամբ։

Անդրկովկասյան սովետական հանրապետությունների հետագա տնտեսական անշեղ վերելքի ապահովումը և նրանց միջև սերտ կապերի ամրապնդումը էլ ավելի ուժեղացան Անդրֆեդերացիայի կազմակերպումից հետո, երբ հիմնադրվեց երկրամասային դաշնակցային խորհուրդը։

Կազմակերպչորեն ձևավորվելուց հետո, դաշնակցային խորհուրդը ձեռնամուխ եղավ երկրամասի սոցիալիստական վերափոխումներին, շինարարական աշխատանքների գործնական քայլերին։ Այդ նպատակով դաշնակցային խորհուրդը, մինչև 1922 թ. մայիսն, ընդունեց մի շարք որոշումներ և դեկրետներ։

1922 թ. ապրիլի 22-ին դաշնակցային խորհրդի որոշման համաձայն միացվեցին երեք հանրապետությունների ֆինանսների, աշխատանքի ԲԳՏ-ի, արտաքին առևտրի կոմիսարիատները։ Դաշնակցային խորհրդի 1922 թ. մայիսի 7-ի որոշումով անդրկովկասյան երկաթուղային վարչության կից ստեղծվեց երկաթուղային տարիֆները մշակելու հատուկ հանձնաժողով, որը միջոցներ ձեռնարկեց երթևեկության բարելավման, եկամուտների ավելացման համար։ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ խորհրդակցության համաձայն (1922 թ. սեպտեմբերի 27—28-ին) որոշվեց միավորել անդրկովկասյան կոոպերացիան[18]։

Բացի այս որոշումներից դաշնակցային խորհուրդը հրապարակեց կարևոր նշանակություն ունեցող դեկրետներ՝ երկրամասային աշխատանքի ժողկոմատի և անդրկովկասյան արտակարգ հանձնաժողովի կանոնադրությունները հաստատելու, անդրկովկասյան հանրապետությունների ընդհանուր արտաքին քա-

---

[17] ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 13, գ. 1, ԹԹ. 81 և 203

[18] «Խորհրդային Հայաստան», N 108, 18 մայիսի, 1922։

[19] ՄԼԻ վրացական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 13, գործ 354, թ. 30։

զաքականության անցկացման, ֆինանսական կոմիսարիատի գործունեության մասին դեկրետները։ Դրա համար անհրաժեշտություն զգացվեց ֆեդերատիվ դաշնակցային միության փոխարեն ստեղծել միասնական ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետություն։ Ահա այդ հարցերի լուծման և Անդրֆեդերացիայի վերջնական ձևավորումն ավարտելու նպատակով հրավիրվեց անդրկովկասյան սովետների 1-ին համագումարը, որը տեղի ունեցավ Բաքվում 1922 թ. դեկտեմբերի 10—13-ին[20]։ Այս համագումարը էլ ավելի ընդլայնեց և ամրապնդեց երկրամասի հանրապետությունների ֆեդերատիվ կապերը։

Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական կապերի ստեղծումն ու նրանց հետագա ամրապնդումը, որպես խիստ անհրաժեշտություն, պահանջում էին անհապաղ կատարել ֆինանսական քաղաքականության միավորում, որովհետև Անդրկովկասում տեղի էր ունենում բոլոր տեսակի ապրանքների ու վայրուտաների սպեկուլյացիա։ Տարբեր հանրապետություններում դեռևս շարունակվում էին գոյություն ունենալ տարբեր դրամանիշներ, որոնք բացասական ազդեցություն ունեին ապրանքափոխանակության ծավալման վրա։ Բազմազան դրամանիշները տարիֆային քաղաքականության մեջ շփոթություն էին առաջացնում։ Օտարերկրյա ապրանքների ներմուծումը կատարվում էր միմիայն Վրաստանի շուկայով, որը զրահապատված էր վրացական վայրուտային սիստեմով։ Այս վիճակը մյուս հանրապետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի համար հսկայական անհարմարություններ էր ստեղծում։ Այդ դրությունը հնարավոր էր վերացնել միայն միասնական դրամանիշ մտցնելով։

Երկրամասի մասշտաբով միասնական դրամական սիստեմի՝ ընդհանուր դրամանիշին անցնելը տեղի ունեցավ դաշնակցային խորհրդի 1923 թ. հունվարի 10-ի դեկրետի համաձայն[21]։ Դրան հաջորդեց ՍՍՌՄ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի 1924 թ. փետրվարի 5-ի որոշումը, որի համաձայն դադարեցվեց ոչ կայուն թղթադրամների թողարկումը, շրջանառության մեջ մտցվեց չերվոնեցը, կատարվեց հին դրամների փոխանակում նորով և այլն։

Միասնական դրամանիշի ստեղծումը վերջ տվեց Անդրկովկասի տնտեսական կյանքում ստեղծված աննորմալ վիճակին և լայն հնարավորություն ստեղծեց անդրկովկասյան հանրապետությունների տնտեսության ամրապնդման համար։

Իրենց աշխատանքների հիմքում ունենալով ՌԿ(բ)Պ կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսյան և օգոստոսյան պլենումների որոշումները՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները ձեռնամուխ եղան տնտեսական ճակատում կարևոր միջոցառումների իրականացմանը։ 1922 թ. վերջին հրավիրվեց Անդրկովկասի մասշտաբով հատուկ խորհրդակցություն, որն ամենայն մանրամասնությամբ քննարկելով առանձին հանրապետությունների հարկային սիստեմը, հանգեց այն միակ ճիշտ եզրակացության, որ պետք է ստեղծել միասնական հարկային սիստեմ՝ բնահարկը փոխարինել դրամական հարկով[22]։ Անդրկովկասի երկրամասային Կենտգործկոմի և Ժողկոմսովետի 1923 թ. ապրիլի 23-ի դեկրետով որոշվեց պետական հարկը, բնահարկը և մնացած տեղական հարկերը, որոնք գանձվում էին ինչպես անհատ գյու-

---

20 Վրացական ՍՍՌ ԿՊԱ. ֆ. 612, գ. 74, թ. 59։

21 Նույն տեղում, օպ. 1, դ. 142, թ. 2։

22 ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 13, գ. 215, թթ. 1 և 7։

ղացիական, այնպես էլ կոլեկտիվ և սովետական տնտեսություններից, փոխարինել միասնական գյուղատնտեսական հարկով։

Այդ դեկրետի համաձայն Անդրկովկասի ԺողԿոմսովետը իջեցրեց հարկերի դրույքները և սակավազոր գյուղացիությանն ազատեց հարկերից։ Այնուհետև, հատուկ դեկրետով սահմանվեց գյուղատնտեսության միասնական հարկի ռայոնացում։ Շրջանների մի մասը պետք է վճարեր դրամային ձևով, իսկ մյուս մասը՝ մթերային։ Հայաստանի մասշտաբով սահմանվեց այդպիսի ռայոնացման 17 կարգ, Ադրբեջանում՝ 24, իսկ Վրաստանում՝ 26։ Միասնական հարկ դրամով պետք է վճարեին Ադրբեջանի 16 նահանգներից 6-ը, Վրաստանի 16 նահանգներից՝ 13-ը, Հայաստանի 10 նահանգներից՝ 2-ը[23]։

Միասնական գյուղատնտեսական հարկի սահմանումը ունեցավ քաղաքական խոշոր նշանակություն։ Այն մեծ չափով նպաստեց բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդմանը, սովետական իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդմանը, կուլակային և նեպմանական տարրերի ու նրանց գործակալների դեմ մղվող պայքարի ուժեղացմանը։ Վերջապես, կուսակցության կողմից հարկային քաղաքականությունը սահմանումը և այլ միջոցառումների կիրառումը նպաստեցին գյուղի և քաղաքի արտադրողական ուժերի աճմանը։

Գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման կարևոր ֆակտորներից էր գյուղատնտեսության ապրանքների շուկայական հարաբերությունների ճիշտ կազմակերպումը։ Մեծ ուշադրության արժանացավ նաև կոոպերացիայի հարցը։ Կոոպերացիայի դերը և նրա խնդիրները գյուղում անհամեմատ ավելի մեծ էին և դժվար, քան քաղաքում։

Գյուղացիական տնտեսությունների ամրապնդման և կուլակների ազդեցությունից դրանց ազատելու գործում մեծ դեր կատարեց պետության կողմից սահմանված վարկը։ Սակայն քանի որ սկզբնական շրջանում դեռ չէին կազմակերպվել գյուղվարկի ստորին օղակներ, որոնք պետք է գյուղացիական տնտեսություններին էժան վարկ տրամադրեին, գյուղացիական վաշխառուն և կուլակը կարողանում էին գյուղացիության որոշ մասին գցել իրենց ազդեցության տակ, կախման վիճակում պահել իրենցից և շահագործել նրանց։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները և տեղական կառավարող օրգանները, կենսագործելով ՌԿ(բ)Պ և Անդրերկրկոմի կենտկոմների որոշումները, վճռական պայքար կազմակերպեցին կուլակային և վաշխառուական տարրերի դեմ, որպեսզի գյուղացիությանն ազատեին կուլակների և վաշխառուների ազդեցությունից։ Սովետական կառավարությունն ընդլայնեց ստորին վարկային ցանցը, կազմակերպեց վարկային կոոպերացիաներ, որոնք գյուղբանկի միջոցով կատարեցին էժան վարկավորում՝ գյուղատնտեսության վերականգնմանն օգնելու նպատակով։

1923 թ. բոլոր հանրապետություններում լայն աշխատանք տարվեց նաև գյուղատնտեսության կոոպերացման ուղղությամբ։ Երկրամասի հանրապետությունների կենտգործկոմների և ժողկոմխորհների 1924 թ. հրատարակված դեկրետների հիման վրա կազմակերպվեցին գյուղատնտեսական զանազան կոոպերացիաներ, որոնք սկսեցին իրենց շուրջը համախմբել չքավոր ու միջակ գյուղացիությանը։ Ստեղծվեցին կաթնա-տնտեսական, այգեգործական, գյուղվար-

---

23 Նույն տեղում, գ. 229, թ. 12։

կային, խառը գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվ ընկերություններ, որոնց թիվը 1923 թ. Ադրբեջանում հասավ 68-ի, իսկ Հայաստանում՝ 75-ի[24]։

Կարևոր միջոցառում էր և այն, որ 1923 թ. կատարվեց արդյունաբերական ապրանքների դների իջեցում, որը ստեղծեց նորմալ հարաբերություններ պետական արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։ Այն հնարավորություն ստեղծեց, մի կողմից, գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման, մյուս կողմից, սպառման շուկայի և արդյունաբերական հումքի բազայի ընդլայնման համար, նպաստեց բանվորա-գյուղացիական դաշինքի, ինչպես նաև քաղաքի և գյուղի տնտեսական կապերի ամրապնդմանը, աշխատավորության բարեկեցության հետագա բարելավմանը։ Գների իջեցումը կոոպերատիվների և պետական առևտրի ձեռքին լավագույն միջոց էր մասնավոր կապիտալի դեմ մղվող պայքարում։

ՀամԿԿ-ի որոշման համաձայն երկրամասի շրջաններում, նահանգներում, ֆաբրիկա-գործարանային և գյուղական սովետներում ստեղծվեցին տնտեսական խորհրդակցություններ, որոնց վրա խնդիր էր դրվում հետևել գյուղի, նահանգի և քաղաքի սահմաններում գյուղատնտեսության զարգացմանը։ Այդ խորհրդակցությունները գոյություն ունեցան մինչև 1925 թ. սկզբները, երբ նրանց իրավունքները տրվեցին համապատասխան սովետների գործկոմների նախագահության իրավասությանը։

Ձեռնարկված միջոցներից էր նաև սովետական իշխանության օրգանների ստեղծումն ու ամրապնդումը։ Հետագայում իրականացվեց պետական ապարատի վերակառուցումը, այդ աշխատանքներում ընդգրկելով բանվոր դասակարգի և գյուղացիության լայն մասսաներին։

Սրանք էին քաղաքական ու գործնական այն կոնկրետ ձեռնարկումները, որոնք պետք է ապահովեին հարձակումը մասնատիրական կապիտալի դեմ և հնարավորություն տային էլ ավելի եռանդուն կերպով ձեռնամուխ լինելու սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցմանը։

Այսպիսով, Անդրկովկասի սովետական հանրապետությունների քաղաքական և տնտեսական սերտ համագործակցությունը, որը ծնունդ առավ սովետական իշխանության հետ մեկտեղ, իրավամբ հանդիսացավ անկախ, իրավահավասար հանրապետությունների սոցիալիստական հարաբերությունների սքանչելի օրինակ։

Г. А. Варткесян

ПОЛИТИЧЕСКОЕ И ЭКОНОМИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО ЗАКАВКАЗСКИХ РЕСПУБЛИК В 1921—1923 гг.

Резюме

Изучение политико-экономического сотрудничества закавказских республик в первые годы Советской власти имеет не только практическое, но и политическое значение.

24 «Սովետական Հայաստանը 1920—25 թթ.», Երևան, 1926։

Сотрудничество закавказских народов после установления Советской власти оказывало большое влияние на осуществление социалистических преобразований, содействовало политическому и экономическому объединению закавказских республик, развитию народного хозяйства и процветанию культуры.

В героической истории закавказских народов особое место занимает образование Закфедерации и установление подлинного содружества закавказских народов.

Благодаря бескорыстной помощи русского народа под руководством Коммунистической партии в исторически короткий срок в прошлом экономически отсталые закавказские народы установили прочное политическое и экономическое сотрудничество.